ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՀՄԱԱՊՁԲ-19/18 ծածկագրով հրատապ մեկ անձ գնման ընթացակարգով տրանսֆորմատորի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Երևան 18 ապրիլի 2019թ.

ժամը. 12:30

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	**Ս. Մելքոնյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)
Անդամներ՝	**Ա. Ջալադյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)
	Ա. Գևորգյան (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)
	Ն. Համբարձումյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)
	Բ. Եդիգարյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)
Հանձնաժողովի քարտուղար	**Ն. Նիկոլայան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Հայտերի գնահատման մասին

(Ս. Մելքոնյան)

Ընդունել ի գիտություն՝ ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցներին՝ ԱՁ «Գրիգոր Այվազյան», «Առսարքտեխ» ՍՊ և «Էներգովեստ» ՍՊ ընկերություններ ընկերությունների հրավերով սահմանված կարգով ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված փաստաթղթերը, իսկ «Առսարքտեխ» ՍՊ և «Էներգովեստ» ՍՊ ընկերություններից նաև տեխնիկական բնութագրի վերաբերյալ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումները: «Գրիգոր Այվազյան» ԱՁ-ը և «Առսարքտեխ» ՍՊ ընկերությունը սահմանված ժամկետում ներկայացրել են պահանջվող փաստաթղթերը, իսկ «Էներգովեստ» ՍՊ ընկերությունը չի ներկայացրել պահանջվող փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց «Գրիգոր Այվազյան» ԱՁ-ի և «Առսարքտեխ» ՍՊ ընկերության կողմից ներկայացրած փաստաթղթերը: Ուսումնասիրության արդյունքում արձանագրվեց հետյալը՝

«Գրիգոր Այվազյան» ԱՁ-ը որպես հայտը ներկայացվելու տարվան և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ կատարված նմանատիպ պայմանագիր ներկայացրել է էլ.տաքացուցիչների համար մալուխի մատակարարման պայմանագրեր 76100000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ: Պայմանագրերին կից ներկայացվել են ապրանքների պատշաճ մատակարարված հանձնման-ընդունման արձանագրությունները և հաշիվ ապրանքագրերը:

ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՀՄԱԱՊՁԲ-19/18 ծածկագրով հրատապ մեկ անձ գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.5 կետով որպես նմանատիպ պայմանագրեր սահմանվել է տրանսֆորմատորների և հարակից էներգետիկ սարքավորումների մատակարարված լինելը:

«Առսարքտեխ» ՍՊ ընկերությունը որպես հայտը ներկայացվելու տարվան և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ կատարված նմանատիպ պայմանագիր ներկայացրել է տրանսֆորմատորի մատակարարման պայմանագիր, որի արժեքը կազմում է 15 402 000 ՀՀ դրամ և ապրանքի մատակարարման հաշիվ ապրանքագիր: Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող հավելված 1-ով սահմանված է մատակարարվելիք ապրանքի անվանումը, մակնիշը, գինը և մատակարարման պայմանները, այն, որ մատակարարումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված՝ 20 օրացուցային օրվա ընթացքում: Տվյալ պահանջի վերաբերյալ կնքված համաձայնագիրը բացակայում է, ինչպես նաև բացակայում է պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

«Արմեն Տոնոյան» ԱՁ-ը ներկայացրել է հայտը ներկայացվելու տարվան նախորդող տարում կնքված տրասֆորմատորի մատակարարման պայմանագիր, որի արժեքը կազմում է 28 200 000 ՀՀ դրամ: Պայմանագրին կից ներկայացրել է ապրանքի մատակարարման հաշիվ-ապրանքագիրը և պայմանագրի կողմի գրությունը այն մասին, որ «Արմեն Տոնոյան» ԱՁ-ը պատշաճ և ժամանակին իրականացրել է ապրանքի մատակարարումը:

Ամփոփելով արդյունքները գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. «Գրիգոր Այվազյան» ԱՁ–ի հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին՝ ներկայացված պայմանագիրը չի համարվում նմանատիպ պատշաճ կատարված պայմանագիր: «Գրիգոր Այվազյան» ԱՁ–ի հայտը գնահատել անբավարար և մերժել:
2. «Առսարքտեխ» ՍՊ ընկերության հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին՝ ներկայացված նմանատիպ պայմանագիրը թերի է և չի կարող համարվել պատշաճ իրականացված: «Առսարքտեխ» ՍՊ ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել:
3. «Էներգովեստ» ՍՊ ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը չներկայացնելու հիմքով:
4. «Արմեն Տոնոյան» ԱՁ-ի հայտը գնահատել բավարար և 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել:
5. Հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին

(Ս. Մելքոնյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ՝ հայտերի գնահատման նիստ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված հարցման վերաբերյալ եզրակացության ստացման օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 14:00-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա 6-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ս. Մելքոնյան

Անդամներ՝ _____ Ա. Ջալադյան

_____ Ա. Գևորգյան

_____ Ն. Համբարձումյան

_____ Բ. Եդիգարյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Ն. Նիկոլայան